Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2025 թ. որոշմամբ
««ԻՄ ՔԱՅԼԸ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԻՄ ՔԱՅԼԸ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ԲՆ.5
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1022650
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-06-13
1.5 ՀՎՀՀ-ն		01282864
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55029273
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://mystep.foundation/en/
1.8 Էլեկտրոնային փոստը		info@mystep.foundation
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Դավիթ Մկրտչյան		
Աննա Հակոբյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	22	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Սոցիալական, մշակութային, կրթական, գիտական և առողջապահական ծրագրեր	827,084,650
	«Քվանտա» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագիր	50,000,000

Digitally signed by
STEPANYAN MARIA
5607880524
Date: 2025.06.30
13:12:24 AMT

	«Հաջողակից սկսնակին» փոքր բիզնեսի աջակցության ծրագիր, Երիտասարդի երազանք նախաձեռնություն	1,000,000
	«Տնտեսապես կայուն ընտանիքներ» նախաձեռնություն	72,142,633
	«Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտում» ծրագիր	11,200,000
	«Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտում» ծրագիր, «Հորիզոններ» դուալ կրթական ծրագիր, «Քվանտա» քվանտային և մեզկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագիր	30,000,000
	«Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտում» ծրագիր, «Հորիզոններ» դուալ կրթական ծրագիր, «Քվանտա» քվանտային և մեզկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագիր, Աջակցություն սկսնակ գործարարներին	10,000,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Սոցիալական, մշակութային, կրթական, գիտական եւ առողջապահական ծրագրեր	241,052,119
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Համակարգչային աքսեսուարներ	949,043
	HDD հիշողության սարքեր	239,335
	Մոնոբլոկներ	1,383,112
	Նոթբուքներ	3,200,676
	Անխափան սնուցման սարք	66,280
	Լազերային տպիչ	148,324
	Անլար խոսափողներ	127,862
	Կենցաղային տեխնիկա	664,592
	Սմարթֆոններ	3,396,092
	Բարձրախոսներ	200,597
	Հեռուստացույցի կախիչ	23,932
	Հեռուստացույց	325,994
	Օդը խոնավեցնող և մաքրող սարք	141,661
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Երաժշտական գործիքներ	32,330,000
	Վրաններ	10,500,000
11. Իրականացված ծրագրերը՝		

11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը
«Հորիզոններ» դուալ կրթական ծրագիր	54,647,889
«Քվանտա» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագիր	115,935,918
«Ներուժ» ծրագիր	24,324,380
«Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտում» ծրագիր	149,322,818
«Սկսնակ կին գործարարներին աջակցություն» նախաձեռնություն	73,716,067
«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ-ի շենքային պայմանների բարելավում» ծրագիր	516,925
«Հաջողակից՝ սկսնակին» ծրագիր	4,804,926
«Ճախրուկ» ծրագիր	569,813
«Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների հասանելիություն/փորձի փոխանակում»	14,220,031
«Տնտեսապես կայուն ընտանիքներ»	52,490,649
Այլ ծրագրեր և նախաձեռնություններ	43,981,472
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	534,530,888
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	534,530,888

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 34 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Երևան
Հունիս 2025

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
5	Հոգաբարձուների խորհրդի կազմ
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Զուտ ակտիվների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնադրամի գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Հիմնադրամի գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գործադիր տնօրեն՝	Աննա Հակոբյան

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի և իր դուստր ձեռնարկության (այսուհետ՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը համաձայն՝ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների ՀՀՍՄԽ հրապարակման (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀՄԷՄԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:
- ձեռք ենք բերում համապատասխան և բավականաչափ աուդիտորական ապացույց Խմբում ընդգրկված կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ, որպեսզի արտահայտենք կարծիք Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման և իրականացման համար: Մենք ենք կրում աուդիտորական կարծիքի պատասխանատվությունը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

27 հունիս, 2025թ.
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն, աուդիտի ղեկավար

Հոգաբարձուների խորհրդի կազմ

Լենա Նազարյան
Հոգաբարձուների խորհրդի նախագահ
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

Վահագն Թևոսյան
Խորհրդի անդամ
ՀՌՀ խորհրդի անդամ

Վահան Վարդապետյան
Խորհրդի անդամ
Բժիշկ, բժշկական գիտությունների թեկնածու

Արաքսի Սիմիդյան
Խորհրդի անդամ
ԱՄՆ-ում «Իմ քայլը» հիմնադրամի մասնաճյուղի պատասխանատու

Վահագն Հայրապետյան
Խորհրդի անդամ
Ջազային երաժիշտ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամ
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2024 Հազար դրամ	2023 Հազար դրամ
Շնորհներից եկամուտ	5	623,960	441,410
Ծրագրային ծախսեր	6	(484,897)	(244,011)
Վարչական ծախսեր	7	(146,443)	(201,550)
Ծառայությունների մատուցումից հասույթ		11,000	19,500
Մատուցված ծառայության ինքնարժեք		(7,821)	(12,155)
Ֆինանսական եկամուտ		5,719	7,213
Ֆինանսական ծախս		(3,724)	(4,326)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/		585	780
Արդյունք մինչև հարկում		(417)	6,861
Շահութահարկի գծով ծախս		(1,203)	(1,666)
Տարվա զուտ արդյունք		(1,620)	5,195
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**(1,620)**	**5,195**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները (էջ 7-34) հաստատվել են ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 27-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Գործադիր տնօրեն
Աննա Հակոբյան

Հաշվապահական ծառայություններ մատուցող
«Դրոֆ Թաքս» ՍՊԸ-ի տնօրեն
Մարիա Ստեփանյան

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	31.12.2024	31.12.2023
		Հազար դրամ	Հազար դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	8	137,328	136,216
Ոչ նյութական ակտիվներ		1,542	1,872
		138,870	**138,088**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		956	90,699
Դեբիտորական պարտքեր	9	43,260	5,002
Դրամական միջոցներ	10	967,055	257,133
		1,011,271	**352,834**
Ընդամենը ակտիվներ		**1,150,141**	**490,922**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	11	45,978	58,042
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	103,476	81,106
		149,454	**139,148**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	11	10,885	10,465
Եկամուտներին վերաբերող շնորհներ	14	957,625	307,095
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	17,226	17,643
		985,736	**335,203**
Ընդամենը պարտավորություններ		**1,135,190**	**474,351**
Զուտ ակտիվ			
Կուտակված արդյունք		**14,951**	**16,571**

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2024 Հազար դրամ	2023 Հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մուտքեր դրամաշնորհներից ու նվիրատվություններից		1,296,698	468,621
Այլ մուտքեր		18,382	24,029
Նվիրատվությունների հատկացում		(58,873)	(63,792)
Վճարումներ ստացված ապրանքների և ծառայությունների դիմաց		(192,034)	(94,430)
Վճարումներ աշխատակիցներին		(151,585)	(143,736)
Այլ ելքեր		(186,172)	(125,126)
		726,416	**65,566**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ստացված դրամաշնորհներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար		-	-
Հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց վճարումներ		(1,714)	-
		(1,714)	**-**
Ֆինանսական գործունեությունից գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	12		
Վարկի մայր գումարի մարում		(10,163)	(9,655)
Վարկի տոկոսի մարում		(3,746)	(4,329)
		(13,909)	**(13,984)**
Դրամական միջոցների զուտ հոսք		**710,793**	**51,582**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(871)	2,533
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը		257,133	203,018
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	10	**967,055**	**257,133**

«Իմ քայլը» բարեգործական հիմնադրամ
Զուտ ակտիվների մասին հաշվետվություն
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կուտակված հավելուրդ Հազար դրամ	Ընդամենը զուտ ակտիվ Հազար դրամ
2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	16,571	16,571
Տարվա համապարփակ արդյունք	(1,620)	(1,620)
2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**14,951**	**14,951**
2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,377	11,377
Տարվա համապարփակ արդյունք	5,195	5,195
2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16,571**	**16,571**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ 12
2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 15
3. ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21
4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ – ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 22
5. ՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ 26
6. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ 26
7. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 26
8. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 27
9. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 28
10. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 28
11. ՎԱՐԿԵՐ 28
12. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐԵՑՈՒՄ .. 29
13. ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ 29
14. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ 29
15. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 30
16. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 30
17. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 30
18. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 31
19. ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 34

1. Հիմնադրամի մասին

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի և նրա դուստր ձեռնարկության՝ «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական կենտրոնի համար, այսուհետ՝ Խումբ:

"Իմ քայլը" բարեգործական հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2018թ.-ին: Հիմնադրամի կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2018թ. հունիսի 13-ին, գրանցման համարը՝ 222.160.1022650: Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Տերյան 1/1:

"Գերազանցության համահայկական կենտրոն" միջազգային գիտակրթական հիմնարկ ՀՄ-ն ստեղծվել է 2022-ին: Հիմնարկի կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2022թ. մայիսի 17-ին, գրանցման համարը՝ 211.182.1238033: Հիմնարկի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ. Տերյան 1/1:

Խմբի նպատակն է ՀՀ-ում և սփյուռքում սոցիալական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական ոլորտների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումն է, նման ծրագրերի օժանդակությունը, այդ ոլորտներում բարեգործությունը:

Ծրագրերի մասին

Խումբն իրականացնում է մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ծրագրեր՝ առաջնահերթություն տալով մարդկանց գիտելիքներ և հմտություններ հաղորդելուն:

Հիմնական ծրագրերն են՝

1. «Քվանտա» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական ծրագիր

Նկարագրություն. Հաշվի առնելով գիտության և տեխնոլոգիաների արդի զարգացումները ողջ աշխարհում, ինչպես նաև քվանտային տեխնոլոգիաների, հատկապես՝ քվանտային մեխանիկայի՝ որպես գիտության կարևոր և կիրառական նշանակությունը, 2022 թվականին «Իմ Քայլը» հիմնադրամը նախաձեռնել և գործարկել է «Քվանտա» մագիստրոսական ծրագիրը՝ քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի ոլորտում:

Նպատակ. Պատրաստել նոր սերնդի մասնագետներ քվանտային տեխնոլոգիաների ոլորտում, ինչը չափազանց կարևոր է կիբերանվտանգության, ռազմարդյունաբերության և Հայաստանի գիտական ներուժի զարգացման համար:

Ծրագրի դասախոսական կազմի մեծ մասը կազմված է արտերկրի առաջատար համալսարաններից և Հայաստանի լավագույն մասնագետներից:

2. Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտման ծրագիր

Նկարագրություն. Ծրագիրն ուղղված է պատերազմում վիրավորված մասնակիցների սոցիալ-տնտեսական վերաինտեգրմանը՝ տրամադրելով անհրաժեշտ ֆինանսական, գիտելիքային և հոգեբանական ռեսուրսներ: Շահառուների մեծ մասը մասնակցում է բիզնես կառավարման և պլանավորման համապարփակ դասընթացների՝ ստացած գիտելիքները կիրառելու իրենց

ընտանեկան բիզնեսներում, իսկ մնացածը մասնակցում են տարբեր ոլորտներին վերաբերող մասնագիտական դասընթացների՝ ըստ նախասիրությունների: Այնուհետև հիմնադրամը աջակցում է դրամաշնորհներով կամ աշխատանքի ուղղորդմամբ՝ ելնելով յուրաքանչյուրի ցանկությունից:

Նպատակ. Սոցիալ-տնտեսական վերաինտեգրումը խթանել պատերազմի մասնակիցների համար՝ ստեղծելով աշխատատեղեր և խրախուսելով աշխատանքը:

Այս պահի դրությամբ ծրագիրն աջակցություն է ցուցաբերել 164 շահառուի:

3. «Հորիզոններ» երկակի կրթության ծրագիր

Նկարագրություն. «Հորիզոններ» երկակի կրթության ծրագիրը հաջողությամբ մշակել և ներդրել է կրթության նոր մոդել՝ հանրակրթական դպրոցներում՝ հիմնվելով տվյալ համայնքի առանձնահատկությունների և սովորողների անհատական կարողությունների վրա:

Նպատակ. Տեսական և գործնական դասերը համադրելով՝ «Հորիզոններ» ծրագիրը հնարավորություն է տալիս մարզային համայնքներում սովորող ավագ դպրոցի աշակերտներին ձեռք բերել գործնական գիտելիքներ խելացի գյուղատնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ: Այս մոդելը ուսուցումը դարձնում է դինամիկ, հետաքրքիր և համապատասխան ժամանակակից աշխարհին:

Սկսած 2023 թվականից, «Ագրոտեխնոլոգիա» մասնագիտական կողմնորոշման դասընթացները անցկացվում են Սյունիքի մարզի խոշորացված Սիսիանի և Գորիսի համայնքներում:

4. «Հաջողից սկսնակին» փոքր բիզնեսի աջակցության ծրագիր

Նկարագրություն. «Իմ Քայլը» հիմնադրամը տարին երկու անգամ (գարնան և աշնան ամիսներին) կազմակերպում է բարեգործական ընթրիք՝ հիմնադրամի գործադիր տնօրենի և ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի մասնակցությամբ: Ընթրիքից ստացված ամբողջ հասույթը ուղղվում է ծրագրի շահառուներին: Յուրաքանչյուր փուլի սկզբում հիմնադրամը հայտարարում է նոր թիրախային խումբ, որպեսզի ծրագիրը հասանելի դառնա հասարակության առավել լայն շերտերի համար: Ընտրված շահառուները մասնակցում են բիզնես կառավարման և պլանավորման համապարփակ դասընթացների, կազմում պրոֆեսիոնալ բիզնես պլաններ, և հետագայում դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվում:

Նպատակ. Հիմնադրամի նպատակն է ոչ միայն խթանել փոքր բիզնեսի զարգացումը Հայաստանում, այլև ձևավորել բարեգործության նոր մշակույթ և այն վերածել ավանդույթի:

5. «Տնտեսապես կայուն ընտանիքներ» նախաձեռնություն

Նկարագրություն. Կիպրոսի կառավարության կողմից տրամադրված դրամաշնորհի միջոցով «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամը տրամադրելու է 250 քմ ջերմոցներ՝ 20 ընտանիքի, որոնք բնակություն են հաստատել Արագածոտնի մարզի երեք (Աշտարակ, Թալին, Ապարան) և Լոռու մարզի չորս (Սպիտակ, Ալավերդի, Փամբակ, Ստեփանավան) համայնքներում:

Նպատակ. Աջակցել գյուղատնտեսական հմտությունների զարգացմանը և ձեռնարկատիրական մտածելակերպի ձևավորմանը 2023թ. Արցախից հարկադիր տեղահանված ընտանիքների շրջանում: Նպատակն է նպաստել նրանց տնտեսական կայունացմանը, տեղական համայնքներում հաջող ինտեգրմանը և երկարաժամկետ բնակեցմանը Հայաստանի Հանրապետությունում:

6. «Սովորելն արդիական է» շարժում

- Հասարակական դասախոսություններ՝ տարբեր ոլորտների տեղական և միջազգային առաջատար մասնագետների կողմից՝ ներկայացնելով կրթության, գիտության, մշակույթի, տեխնոլոգիաների և հանրային կյանքի հետ կապված տարբեր թեմաներ:
- Շարժումը միավորում է մարդկանց, ովքեր կիսում են սովորելու և ինքնազարգացման հրատապ անհրաժեշտության մասին իրազեկվածության բարձրացման գաղափարը:
- Դասընթացներ և տարբեր կրթական ծրագրեր՝ մասնակիցներին ապահովելով գործնական հմտություններով, մասնագիտական զարգացման հնարավորություններով և տարբեր ոլորտներում գիտելիքների խորացմամբ:

Նկարագրություն. «Սովորելն արդիական է» շարժումը նպատակ ունի խթանել ողջ կյանքի ընթացքում կրթություն ստանալու գաղափարը և ստեղծել նոր հնարավորություններ ինքնազարգացման համար: Այն տարածում է փիլիսոփայություն, որ մարդ սովորում է ամբողջ կյանքի ընթացքում՝ սովորելը դարձնելով ոգեշնչող և վարակիչ գործընթաց: Ծրագրի շրջանակում հիմնադրամը ամբողջությամբ ֆինանսավորում է տարբեր դասընթացներ և կրթական ծրագրեր, ինչպես նաև նախատեսվում է կազմակերպել TED ֆորմատով ելույթներ՝ ներառյալ միջազգային ճանաչում ունեցող խոսնակների մասնակցությամբ:

Նպատակ. Սովորելու սերը՝ ամեն ինչի մասին, ամեն ինչից, անսահման և չհագեցող ձևով, դարձնել համընդհանուր արժեք և հասցնել այն նույնիսկ Հայաստանի ամենահեռավոր անկյունում գտնվող վերջին տուն:

7. «Ճախրուկ» սոցիալական սրճարան նախագիծ

Նկարագրություն. «Ճախրուկ» սոցիալական սրճարանը ծառայում է որպես կամուրջ հասարակության և սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց միջև՝ նպաստելով նրանց ներգրավվածությանն ու ինտեգրմանը հասարակական կյանքում: «Ճախրուկ» սրճարանում աշխատանք կունենան մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները:

Նպատակ. Աջակցել հատուկ կարիքներ ունեցող անձանց կարողությունների զարգացմանն ու սոցիալական ներառմանը, բարձրացնել հասարակության իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների վերաբերյալ, նպաստել հասարակությունում գոյություն ունեցող ստերեոտիպերի հաղթահարմանը, ապահովել նրանց համար կայուն աշխատանքային հնարավորություններ և աջակցել ինքնուրույն ու ինքնաբավ կյանք ունենալու գործընթացին:

Գործարար միջավայրը

Խումբը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Խմբի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ՝ ենթարկվելով մի քանի մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչն, ի թիվս այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դրամական միջոցների զգալի հոսքեր կան դեպի ՀՀ: Ուստի, տարածաշրջանում քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի

անկայունությունը, սուր գնաճը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառացած այլ ռիսկերը կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է համաշխարհային տնտեսական ցնցումներին և կարողացել է և 2022թ.-ին, և 2023թ.-ին գրանցել տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ հիմնականում զբոսաշրջության, մի շարք ընկերությունների Հայաստան տեղափոխվելու և դրամական փոխանցումների նշանակալի աճի շնորհիվ: Նշված բոլոր գործոնները հանգեցրել են ՀՆԱ-ի 8.7% աճի 2024թ-ին: Կառավարության 2021-2026թթ. տնտեսական ծրագիրը նպատակ ունի խթանել արտահանմանը միտված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունի Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Խումբը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Խմբի գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա: Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ընկերության ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

2. Պատրաստման հիմունքներ

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ-ներ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 18-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Խմբի գործառնական արժույթը:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ամորտիզացված արժեքներով:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

2023 թվականի մայիսի 25-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունները, որոնք փոփոխեցին ՀՀՄՍ 7-ը՝ «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն», և ՖՀՄՍ 7-ը՝ «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» (Փոփոխություններ): Այս փոփոխություններն առաջացել են մատակարարման շղթայի ֆինանսավորման պայմանավորվածություններից և համապատասխան բացահայտումներից բխող պարտավորությունների և դրա հետ կապված դրամական միջոցների հոսքերի ներկայացման պահանջների վերաբերյալ ՖՀՄՍ-ների մեկնաբանությունների կոմիտե (Կոմիտե) ներկայացված դիմումի հետևանքով: 2020 թվականի դեկտեմբերին Կոմիտեն հրապարակեց օրակարգային որոշում (Մատակարարման շղթայի ֆինանսական պայմանավորվածություններ – հակադարձ ֆակտորինգ), որն անդրադարձավ այս դիմումին՝ հիմնվելով ՖՀՄՍ-ի հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների վրա, որոնք առկա էին այդ ժամանակ: Այս գործընթացի ընթացքում շահագրգիռ կողմերի հետադարձ կապը բացահայտեց սահմանափակումներ այդ պահին առկա պահանջներում, որոնք վերաբերում են օգտագործողների կարևոր տեղեկատվական կարիքներին՝ հասկանալու մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների ազդեցությունը Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և համեմատելու մի Խումբը մյուսի հետ:

Ի պատասխան այս հետադարձ կապին՝ ՀՀՄՍԽ-ն ձեռնարկեց նեղ կիրառման ստանդարտի մշակումը, որը հանգեցրեց փոփոխությունների: Փոփոխությունները պահանջում են, որ կազմակերպությունները տրամադրեն որոշակի հատուկ բացահայտումներ (որակական և քանակական)՝ կապված մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների հետ: Փոփոխությունները նաև պարունակում են ուղեցույց մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածությունների բնութագրերի վերաբերյալ:

Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություն)

ՖՀՄՍ-ի մեկնաբանությունների կոմիտեն 2020 թվականի հունիսին հրապարակեց իր օրակարգային որոշումը՝ Վաճառք և հետադարձ վարձակալություն փոփոխական վճարումներով: Այս հարցը փոխանցվել է ՀՀՄՍԽ-ին որոշ ասպեկտների վերաբերյալ ստանդարտներ սահմանելու համար: ՀՀՄՍԽ-ն վերջնական փոփոխությունները հրապարակել է 2022 թվականի սեպտեմբերին:

Փոփոխություններով վաճառող-վարձակալից պահանջվում է որոշել «վարձավճարները» կամ «վերանայված վարձավճարները» այնպես, որ վաճառող-վարձակալը չճանաչի շահույթ կամ վնաս, որը վերաբերում է վաճառող-վարձակալի կողմից պահպանված օգտագործման իրավունքին:

Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություն)

2020 թվականի հունվարին ՀՀՄՍ Խորհուրդը փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 1-ում /Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ/, որոնք հետագայում մասամբ փոփոխվել են 2022 թվականի հոկտեմբերին թողարկված «Կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ» փոփոխություններով: Փոփոխությունները պահանջում են, որ պարտավորության մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն տասներկու ամսով

հետաձգելու կազմակերպության իրավունքը պետք է հիմնավորված լինի և գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Պարտավորության դասակարգումը կախված չէ այն հավանականությունից, որ կազմակերպությունը կկիրառի մարումը հետաձգելու իր իրավունքը հաշվետու ժամանակաշրջանից հետո առնվազն տասներկու ամսով:

COVID-19 համաճարակի պատճառով Խորհուրդը մեկ տարով հետաձգել է փոփոխությունների ուժի մեջ մտնելը 2024 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություն)

ՀՀՄՍ 1-ի /«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»/ փոփոխությունների թողարկումից հետո ՀՀՄՍԽ-ն 2022 թվականի հոկտեմբերին լրացուցիչ փոփոխություններ կատարեց ՀՀՄՍ 1-ում: Եթե կազմակերպության հետաձգման իրավունքը կախված է կազմակերպության կողմից սահմանված պայմանների կատարումից, ապա այդ պայմաններն ազդում են այն հանգամանքի վրա, թե արդյոք այդ իրավունքը գոյություն ունի հաշվետու ժամանակաշրջանի վերջում, եթե կազմակերպությունից պահանջվում է կատարել պայմանը հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կամ դրանից առաջ, և չեն ազդում այն հանգամանքի վրա, թե արդյոք կազմակերպությունից պահանջվում է կատարել պայմանները հաշվետու ժամանակաշրջանից հետո: Փոփոխությունները նաև հստակեցնում են «կարգավորում» տերմինի նշանակությունը պարտավորությունը ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու նպատակով:

2024 թվականի հունվարի 1-ից գործող նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները էական ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից, որոնք գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություն)

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխություններն առաջացել են ՖՀՄՍ Մեկնաբանությունների կոմիտե ներկայացված դիմումի հետևանքով՝ կապված փոխարժեքի որոշման հետ, երբ առկա է փոխանակման հնարավորության երկարատև բացակայություն: Նախքան փոփոխությունները ՀՀՄՍ 21-ը չէր ներառում հստակ պահանջներ փոխարժեքի որոշման համար, երբ արժույթը փոխարկելի չէր այլ արժույթի, ինչը գործնականում հանգեցրեց տարաձայնությունների: Կոմիտեն առաջարկեց, որպեսզի ՀՀՄՍ Խորհուրդը մշակի ՀՀՄՍ 21-ի նեղ շրջանակի փոփոխություններ՝ այս խնդիրը լուծելու համար: Հետագա քննարկումներից հետո ՀՀՄՍ Խորհուրդը 2021 թվականի ապրիլին հրապարակեց ՀՀՄՍ 21-ի առաջարկվող փոփոխությունների նախագիծը, իսկ վերջնական փոփոխությունները հրապարակվեցին 2023 թվականի օգոստոսին: Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխանակելի չէ այլ արժույթի հետ:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

Ի պատասխան ՖՀՄՍ-ների մեկնաբանությունների կոմիտեին ուղղված հարցերին և իրագործումից հետո ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքների» դասակարգման և չափման պահանջների իրականացված վերանայումից բխող հարցերին՝ 2024 թվականի մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ կատարված փոփոխությունները: Փոփոխությունները փոխում են ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի հետևյալ պահանջները:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում

Էլեկտրոնային փոխանցումների միջոցով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

- տոկոսային տարբեր հասարակ վարկային պայմանագրում (մայր գումարի վճարումներ և տոկոսների գնահատում – «SPPI թեստ»)
- Պայմանագրային պայմաններ, որոնք փոխում են պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ չափը
- Առանց ետընթացության իրավունքի ֆինանսական ակտիվներ գործառույթներով
- Ներդրումներ պայմանագրային կապակցված գործիքներում:

Բացահայտումներ

- Ներդրումներ բաժնային գործիքներում, որոնք չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով:
- Պայմանագրային պայմաններ, որոնք կարող են փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետը կամ գումարը:

Փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ այն հարցի վրա, թե ինչպես են կազմակերպությունները հաշվառում ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը և ինչպես են դասակարգվում ֆինանսական ակտիվները: Փոփոխությունները թույլ են տալիս կազմակերպությանը վաղաժամկետ ընդունել միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և հարակից բացահայտումների հետ կապված փոփոխությունները և կիրառել մնացած փոփոխությունները ավելի ուշ: Սա հատկապես օգտակար կլինի այն կազմակերպությունների համար, որոնք ցանկանում են վաղաժամկետ ընդունել փոփոխություններն այնպիսի ֆինանսական գործիքների համար, որոնք ունեն ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարման) կամ նմանատիպ բնութագրեր:

ՖՀՄՍ հաշվապահական ստանդարտների տարեկան բարելավումներ

Տարեկան բարելավումները սահմանափակվում են փոփոխություններով, որոնք կա՛մ հստակեցնում են ՖՀՄՍ ստանդարտի ձևակերպումները, կա՛մ ուղղում են համեմատաբար աննշան անցանկալի հետևանքները, բացթողումները կամ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների միջև հակասությունները: Առաջարկվող բարելավումներն ամփոփված են մեկ փաստաթղթում: Տարեկան բարելավումների այս ցիկլը վերաբերում է հետևյալին.

- Հեջային հաշվառում առաջին անգամ որդեգրողի կողմից (Փոփոխություններ ՖՀՄՍ 1-ում՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում)
- Իրական արժեքի և գործարքի գնի միջև հետաձգված տարբերության բացահայտում (Փոփոխություններ ՖՀՄՍ 7-ի իրականացման ուղեցույցում)
- Շահույթ կամ վնաս ապաճանաչման արդյունքում (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

- Ներածություն և վարկային ռիսկի բացահայտում (Փոփոխություններ ՖՀՄՍ 7-ի իրականացման ուղեցույցում)
- Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ)
- Գործարքի գին (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ)
- «Փաստացի գործակալի» սահմանում (ՖՀՄՍ 10-ի փոփոխություններ)
- Ծախսերի մեթոդ (ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ):
- Վերջնական փոփոխությունները հրապարակվել են 2024 թվականի հուլիսին:

Պայմանագրեր, որոնք վերաբերում են բնությունից կախված էլեկտրաէներգիայի (նախկինում էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր) (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)

2024 թվականի դեկտեմբերի 18-ին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել բնությունից կախված էներգիայի պայմանագրերի ֆինանսական հետևանքների մասով կազմակերպությունների հաշվետվությունները բարելավելու նպատակով, որոնք հաճախ կառուցված են որպես էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր (PPAs): Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերն օգնում են ընկերություններին ապահովել էլեկտրաէներգիայի մատակարարումը քամու և արևային էներգիայի աղբյուրներից: Քանի որ այս պայմանագրերով գեներացվող էլեկտրաէներգիայի քանակը կարող է տարբեր լինել՝ ելնելով եղանակային պայմանների հետ կապված անվերահսկելի գործոններից, ընթացիկ հաշվապահական պահանջները կարող են համարժեքորեն չարտացոլել, թե ինչպես են այդ պայմանագրերը ազդում ընկերության գործառնական արդյունքների վրա: Ի պատասխան՝ ՀՀՄՍԽ-ը նպատակաուղղված փոփոխություններ է կատարել ՖՀՄՍ 9-ում /Ֆինանսական գործիքներ/ և ՖՀՄՍ 7-ում /Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ/ ֆինանսական հաշվետվություններում այս պայմանագրերի վերաբերյալ բացահայտումները բարելավելու համար: Փոփոխությունները ներառում են.

- «Սեփական օգտագործման» պահանջների կիրառման պարզաբանում,
- Հեջավորման հաշվառման թույլատրում, եթե այդ պայմանագրերն օգտագործվում են որպես հեջավորման գործիքներ, և
- Բացահայտման նոր պահանջների ավելացում, որը ներդրողներին հնարավորություն կտա հասկանալու այս պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական գործունեության և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխությունների վաղ կիրառումը թույլատրվում է: Այնուամենայնիվ, որոշ իրավական համակարգերի դեպքում այս փոփոխությունները պետք է հաստատվեն նախքան դրանք կիրառելը:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

ՖՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում

- «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» ՖՀՄՍ 18-ը փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ին և պարտադիր բնույթ է կրում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 18-ը, որը հրապարակվել է ՀՀՄՍԽ-ի կողմից 2024 թվականի ապրիլի 9-ին, սահմանում է զգալի նոր պահանջներ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համար՝ կենտրոնանալով հետևյալի վրա.
- Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը, ներառյալ պահանջները պարտադիր ենթագումարների համար, որոնք պետք է ներկայացվեն: ՖՀՄՍ 18-ը ներկայացնում է պահանջներ եկամուտների և ծախսերի հոդվածների համար, որոնք պետք է դասակարգվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հինգ կատեգորիաներից մեկում: Այս դասակարգման արդյունքում ներկայացվում են որոշակի ենթագումարներ, օրինակ՝ գործառնական կատեգորիայի բոլոր եկամուտների և ծախսերի հոդվածների

հանրագումարը, ներառյալ «գործառնական շահույթի կամ վնասի» նոր պարտադիր ենթագումարը:

- Տեղեկատվության համախմբում և տարանջատում, ներառյալ ընդհանուր սկզբունքների ներդրումը, թե ինչպես պետք է տեղեկատվությունը համախմբվի և տարանջատվի ֆինանսական հաշվետվություններում:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչներին (MPM) առնչվող բացահայտումներ, որոնք ֆինանսական կատարողականի չափումներ են՝ հիմնված ՖՀՄՍ-ներով պահանջվող ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի վրա համապատասխան ճշգրտումներով (օրինակ՝ «ճշգրտված շահույթ կամ վնաս»): Կազմակերպություններից կպահանջվի բացահայտել MPM-ն իրենց ֆինանսական հաշվետվություններում, ներառյալ MPM-ի համադրումը ՖՀՄՍ-ի ստանդարտներին համապատասխան հաշվարկված մոտակա ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի հետ: ՖՀՄՍ 18-ի նպատակն է բարելավել ընկերությունների գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների համեմատելիությունը և թափանցիկությունը: ՖՀՄՍ 18-ը նաև հանգեցրել է չնչին փոփոխություններին դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

ՖՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ

2024 թվականի մայիսի 9-ին ՀՀՄՍԽ-ը հրապարակեց ՖՀՄՍ 19-ը՝ «Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. բացահայտումներ»: Շահագրգիռ կողմերը դիմել էին ՀՀՄՍԽ՝ խնդրելով թույլատրել դուստր կազմակերպությանը, որը հաշվետու է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում ՖՀՄՍ կիրառող մայր կազմակերպության առջև, կիրառել ՖՀՄՍ-ներն իր սեփական ֆինանսական հաշվետվություններում բացահայտման նվազեցված պահանջներով: Ելնելով այս դիմումից՝ ՀՀՄՍԽ-ը իր հետազոտական պորտֆելում ավելացրեց մի նախագիծ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության դուստր ընկերությունների համար բացահայտման նվազեցված պահանջներ ապահովելու վերաբերյալ: Նախագիծն ավարտվեց ՖՀՄՍ 19-ի թողարկմամբ, որը համապատասխան դուստր ընկերություններին թույլ է տալիս կիրառել բացահայտման նվազեցված պահանջներ՝ միաժամանակ կիրառելով ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Օրինակ, ՖՀՄՍ 19-ի համաձայն, կազմակերպությունը, որն ունի գործարքներ ՖՀՄՍ 2-ի /Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ/ շրջանակներում, չի կիրառի ՖՀՄՍ 2.44-52-ի բացահայտման պահանջները, որոնք շատ ընդարձակ են: Փոխարենը, կազմակերպությունը պետք է բացահայտի միայն ՖՀՄՍ 19-ի 31-34-րդ պարագրաֆների տեղեկատվությունը, որը ներառում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման պայմանավորվածությունների նկարագրությունը, բաժնետոմսերի օպցիոնների չափը և իրագործման միջին կշռված արժեքները, կազմակերպության՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների իրական արժեքը չափելու կարգը, ինչպես նաև ՖՀՄՍ 2-ի շրջանակներում գործարքների վերաբերյալ այլ ընդհանուր տեղեկությունները:

Բացահայտման պահանջների կրճատման աստիճանը պատկերացնելու համար պետք է նշել, որ ՖՀՄՍ 2-ի՝ բացահայտման պահանջներին վերաբերող հատվածը ներկայումս պարունակում է 991 բառ, մինչդեռ ՖՀՄՍ 19-ը պարունակում է ընդամենը 250 բառ՝ կապված ՖՀՄՍ 2-ի համաձայն տեղեկատվության բացահայտման հետ: ՖՀՄՍ 19-ի պահանջներին համապատասխանելու չափանիշները հետևյալն են.

- Կազմակերպությունը դուստր ընկերություն է հանդիսանում (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 10-ի /Համախմբված ֆինանսական հաշվետվություններ/ Հավելված Ա-ում),
- Կազմակերպությունը չունի հանրային հաշվետվողականություն, և
- Կազմակերպությունն ունի վերջնական կամ միջանկյալ մայր ընկերություն, որը հրապարակում է հանրային օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՀՄՍ հաշվապահական

հաշվառման ստանդարտներին: Կազմակերպությունն ունի հանրային հաշվետվողականություն, եթե.

- նրա պարտքային կամ բաժնային գործիքները շրջանառվում են բաց շուկայում, կամ այն գտնվում է բաց շուկայում շրջանառելու համար այդպիսի գործիքներ թողարկելու գործընթացում, կամ
- այն ֆիդուցիար պարտականությունների շրջանակում պահում է ակտիվներ արտաքին կողմերի լայն խմբերի համար՝ որպես իր հիմնական գործունեություններից մեկը:

Խումբը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Խումբը չի ակնկալում, փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Խումբը չի ակնկալում, որ ՀՀՄՄԽ-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Խումբը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ:
Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա:
Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:

Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>

Անընդհատությանը վերաբերող գնահատումներ և դատողություններ

Խմբի ղեկավարությունը գնահատում է, որ այն կշարունակի իր գործունեությունը անընդհատության սկզբունքով:

Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Խմբի ֆինանսական դրությունը, ընթացիկ դրամական միջոցների մնացորդը, ընթացիկ պարտավորությունները և ֆինանսավորում

հավաքագրելու կարողությունը նոր և առկա ծրագրերի իրականացման համար: Խումբը մտադիր է կազմակերպել դրամահավաքի նոր արշավ և զարգացնել նոր հարաբերություններ, որոնք թույլ կտան հանգանակություն և դրամաշնորհային մուտքեր ապահովել Խմբի գործունեության իրականացման համար:

Համախմբման հիմքերը

Երբ Խումբը տիրապետում է ներդրման օբյեկտի նկատմամբ վերահսկողության, ապա վերջինս դասակարգվում է որպես դուստր կազմակերպություն: Խումբը վերահսկում է ներդրման օբյեկտը, եթե առկա են հետևյալ երեք տարրերը՝ վերահսկողություն ներդրման օբյեկտի նկատմամբ, ներդրման օբյեկտից ստացվող փոփոխական հատույցների հասանելիություն և ներդրողի

կարողություն՝ օգտագործելու իր վերահսկողությունը՝ սույն փոփոխական հատույցների վրա ազդելու նպատակով: Վերահսկողությունը վերագնահատվում է ամեն անգամ, երբ փաստերն ու հանգամանքները մատնանշում են, որ վերահսկողության նշված տարրերից մեկում կարող է փոփոխություն ի հայտ գալ: Ներկազմակերպական գործարքները և Խմբի ընկերությունների միջև մնացորդները վերացվում են համախմբման արդյունքում: Դուստր ձեռնարկությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվել է անհրաժեշտության դեպքում՝ Խմբի որդեգրած քաղաքականություններին համապատասխանությունն ապահովելու համար:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Խմբի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի ասիճանակարգ»):
Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)
Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ – ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Խումբը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Խումբը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Խմբի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի

կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Խմբի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:.

Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է որոշել ռիսկերի սահմանները և այնուհետև ապահովել, որ ռիսկերի ազդեցությունը մնում է այդ սահմաններում: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նախատեսված են ներքին

քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումն ապահովելու համար՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Խմբի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ,
- Վարկեր,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

Ֆինանսական ակտիվներ	**Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**	
	2024	**2023**
	Հազար դրամ	**Հազար դրամ**
Դեբիտորական պարտքեր	2,393	-
Դրամական միջոցներ	967,055	257,133
	969,448	**257,133**

Ֆինանսական պարտավորություններ	**Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ**	
	2024	**2023**
	Հազար դրամ	**Հազար դրամ**
Վարկեր	56,863	68,507
Կրեդիտորական պարտքեր	2,134	2,303
	58,997	**70,810**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և կրեդիտորական պարտքեր:
Դրամական միջոցների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Իրական արժեքի աստիճանակարգի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի աստիճանակարգի 2-րդ մակարդակում ներկայացված են Ծան. 19-ում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Խմբի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Խումբը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Դրամական միջոցներ բանկում

Խումբը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի Խմբի կողմից դրամական միջոցները սպասարկող ՀՀ առևտրային բանկերը վստահելի են:

	31.12. 2024	**31.12.2023**
Դրամական միջոցներ բանկերում	**Հազար դրամ**	**Հազար դրամ**
[Բանկ Ա]	106,076	65,671
[Բանկ Բ]	826,127	52,208
[Բանկ Գ]	22,661	9,179
[Բանկ Դ]	91	5,407
[Բանկ Ե]	12,100	124,668
	967,055	**257,133**

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Խմբի գործարքներն արտահայտված են ՀՀ դրամից տարբեր արժույթով:

Խմբի արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով կամ այլ արտարժույթով բանկային մնացորդների, ինչպես նաև արտարժույթով արտահայտված ստացված վարկի գծով: Այս ռիսկն, ըստ էության, Խմբի կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:
2024թ և 2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝

	USD		CHF	
	2024 Հազար դրամ	2023 Հազար դրամ	2024 Հազար դրամ	2023 Հազար դրամ
Դրամական միջոցներ	11,897	26,726	220	-
Վարկեր	(56,863)	(68,507)	-	-
Զուտ դիրքը	**(44,966)**	**(41,781)**	**220**	**-**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժեզրման ազդեցությունը (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա շահույթի նվազեցմանը՝ 4,497 ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 4,178 հազար դրամի չափով): Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ Շվեյցարական ֆրանկի 10% արժեզրման ազդեցությունը (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա շահույթի նվազեցմանը՝ 22 ՀՀ դրամի չափով (2023թ.՝ զրո):

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Խմբի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Խմբի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Խմբի քաղաքականության՝ Խումբը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ:
Այդ համատեքստում Խումբը նպատակ ունի բավարար կանխիկ գումար պահել իր պարտավորությունները կատարելու համար:

Ստորև ներկայացված են Խմբի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
Վարկեր	1,168	10,481	13,968	13,978	23,321
Կրեդիտորական պարտքեր	2,134	-	-	-	-
	3,302	**10,481**	**13,968**	**13,978**	**23,321**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 2 տարի հազ. դրամ	2-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
Վարկեր	1,160	10,398	13,854	13,863	37,017
Կրեդիտորական պարտքեր	2,303	-	-	-	-
	3,463	**10,398**	**13,854**	**13,863**	**37,017**

5. Շնորհից եկամուտ

	2024 Հազար դրամ	2023 Հազար դրամ
Եկամուտներին վերաբերող շնորհներից	615,437	433,654
Ակտիվներին վերաբերող շնորհներից	8,523	7,756
	623,960	**441,410**

6. Ծրագրային ծախսեր

	2024 Հազար դրամ	2023 Հազար դրամ
«Հորիզոններ» դուալ կրթական ծրագիր	36,508	17,536
«Quanta» քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի մագիստրոսական կրթական ծրագիր	80,655	90,699
«Ներուժ» ծրագիր	16,250	33,750
«Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտում» ծրագիր	93,997	33,855
«Սկսնակ կին գործարարներին աջակցություն» նախաձեռնություն	49,246	-
«Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների հասանելիություն/փորձի փոխանակում»	9,500	-
«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ-ի շենքային պայմանների բարելավում» ծրագիր	345	-
«Հաջողակից՝ սկսնակին» ծրագիր	3,210	-
Ծրագրային աշխատավարձ	381	-
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	165,423	-
Այլ ծրագրային ծախսեր	29,382	68,172
	484,897	**244,011**

7. Վարչական ծախսեր

	2024 հազար դրամ	2023 հազար դրամ
Աշխատավարձի գծով ծախս	98,338	150,480
Աուդիտի և խորհրդատվական ծախսեր	18,761	18,480
Հիմնական միջոցների մաշվածություն	11,523	15,858
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	5,493	5,166
Վերանորոգում և սպասարկում	3,246	-
Հարկեր	2,592	4,520
Բանկային ծախսեր	178	333
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	523	2,054
Այլ ծախսեր	5,789	4,657
	146,443	**201,550**

8. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Սարքավորումներ	Մեքենաներ	Գրասենյա-կային գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Սկզբնական արժեք						
1 հունվարի 2023թ.	**165,901**	**10,645**	**50**	**6,528**	**3,489**	**186,613**
Ավելացումներ	-	283	-	-	371	654
Դուրսգրումներ	-	-	-	-	-	-
31 դեկտեմբերի 2023թ.	**165,901**	**10,928**	**50**	**6,528**	**3,860**	**187,267**
Ավելացումներ	-	6,519	-	-	6,493	13,012
Դուրսգրումներ	-	(4,151)	-	(163)	(186)	(4,500)
31 դեկտեմբերի 2024թ.	**165,901**	**13,296**	**50**	**6,365**	**10,167**	**195,779**
Կուտակված մաշվածություն						
1 հունվարի 2023թ.	26,032	8,557	6	3,636	804	39,035
Մաշվածություն	8,268	1,623	6	1,297	821	12,015
Դուրսգրում	-	-	-	-	-	-
31 դեկտեմբերի 2023թ.	**34,300**	**10,180**	**12**	**4,933**	**1,625**	**51,050**
Մաշվածության ծախս	8,268	1,233	6	1,271	720	11,498
Ճշգրտում	-	(3,834)	-	(158)	(105)	(4,097)
31 դեկտեմբերի 2024թ.	**42,568**	**7,579**	**18**	**6,046**	**2,240**	**58,451**
Զուտ հաշվեկշռային արժեք						
1 հունվարի 2023թ.	139,869	2,088	44	2,892	2,685	147,578
31 դեկտեմբերի 2023թ.	**131,601**	**748**	**38**	**1,595**	**2,235**	**136,216**
31 դեկտեմբերի 2024թ.	**123,333**	**5,717**	**32**	**319**	**7,927**	**137,328**

9. Դեբիտորական պարտքեր

	31.12.2024 հազար դրամ	31.12.2023 հազար դրամ
Դեբիտորական պարտքեր	2,393	2,393
Ընդամենը՝ ամորտիզացված ծախս դասակարգված դրամական միջոցներ	**2,393**	**2,393**
Կանխավճարներ	40,827	2,537
Կանխավճարներ՝ աշխատակիցներին	40	65
Հարկեր	-	7
	43,260	**5,002**

10. Դրամական միջոցներ

	31.12.2024 հազար դրամ	31.12.2023 հազար դրամ
Դրամական միջոցներ բանկերում ՀՀ դրամով	967,043	230,407
Դրամական միջոցներ բանկերում արտարժույթով	12	26,726
	967,055	**257,133**

11. Վարկեր

Խումբը Երևան քաղաքում գրասենյակային տարածք ձեռքբերելու նպատակով ՀՀ առևտրային բանկից 2019թ.-ին ստացել է վարկ՝ տարեկան 6% դրույքաչափով, ԱՄՆ դոլարով, տասը տարի ժամկետով: Վարկը ապահովված է նշված տարածքի գրավով:

Ֆինանսական հաստատություն	Գործարքի տեսակը	Արժույթ	Մարման ժամկետ	Տոկոս (%)	31.12.2024 հազար դրամ	31.12.2023 հազար դրամ
Բանկ 1	Հիպոտեքային վարկ	ԱՄՆ դոլար	2029	6	56,863	68,507

12. Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համահավասարեցում

	Փոխառություններ հազար դրամ
Մնացորդ 1 հունվարի 2024թ.	**68,507**
Վարկի ստացում	-
Տոկոսային ծախս	3,724
Մայր գումարի մարում	(10,163)
Տոկոսի մարում	(3,746)
Արտարժութային փոխարժեքից կորուստ	(1,459)
Մնացորդ 31 դեկտեմբերի 2024թ.	**56,863**
Մնացորդ 1 հունվարի 2023թ.	**76,193**
Վարկի ստացում	-
Տոկոսային ծախս	4,323
Մայր գումարի մարում	(9,655)
Տոկոսի մարում	(4,326)
Արտարժութային փոխարժեքից կորուստ	1,972
Մնացորդ 31 դեկտեմբերի 2023թ.	**68,507**

13. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2024 հազար դրամ	31.12.2023 հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	**81,107**	**78,244**
Ձեռքբերումներ	10,561	111
Շնորհի վերադասակարգում	19,780	10,508
Շնորհից եկամտի ճանաչում	(7,972)	(7,756)
Մնացորդը տարեվերջին	**103,476**	**81,107**

14. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	31.12.2024 AMD'000	31.12.2023 AMD'000
Մնացորդը տարեսկզբին	**307,095**	**175,971**
Ստացված դրամաշնորհներ՝ դրամով	1,340,079	575,286
Վերադասակարգում ակտիվների հետ կապված դրամաշնորհներին	(19,780)	(10,508)
Շնորհից եկամտի ճանաչում	(669,769)	(433,654)
Մնացորդը տարեվերջին	**957,625**	**307,095**

15. Կրեդիտորական պարտքեր

	31.12.2024 AMD'000	31.12.2023 AMD'000
Առևտրային կրեդիտորական պարտքեր	2,134	2,304
Կրեդիտորական պարտքեր, բացառությամբ փոխառությունների և վարձակալության պարտավորությունների՝ ամորտիզացված արժեքով	**2,134**	**2,304**
Հարկերի հետ կապված այլ վճարումներ	5,435	7,760
Աշխատակիցների կուտակված նպաստներ	5,075	5,910
Կրեդիտորական պարտքեր՝ աշխատակիցներին	3,375	-
Վճարման ենթակա շահութահարկ	1,207	1,669
	17,226	**17,643**

16. Կապակցված կողմերի գործարքներ

Կապված կողմերի գործարքները հետևյալն են.

Կապակցված կողմ	Գործարքի տեսակը	2024 հազար դրամ	2023 հազար դրամ
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող Խումբ*	Ստացված դրամաշնորհներ	7,742	27,040
		7,742	**27,040**

* Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող Խումբը գտնվում է ԱՄՆ-ում: Այն միջոցներ է հավաքում ԱՄՆ-ից և փոխանցում է Խմբին:

Կառավարման հիմնական անձնակազմի փոխհատուցում

Հաշվետու ժամանակահատվածում հիմնական ղեկավար անձնակազմի ընդհանուր փոխհատուցումը (ներառյալ աշխատավարձը և պարգևավճարները) կազմել է 38,716 հազար դրամ (2023թ.՝ 38,189 հազար դրամ):

17. Պայմանական պարտավորություններ

Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Խումբը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական վիճակի վրա:

Հարկային ռիսկեր

Հայաստանի հարկային, փոխարժեքային և մաքսային համակարգերը բնորոշվում են օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և

ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

Գնումների գծով պարտականություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի ընկերությունը չունի գնումների գծով պայմանական պարտավորություններ:

18. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Դրամաշնորհներ

Խումբը որպես դրամաշնորհ է ճանաչում հիմնադիրներից, միջազգային և տեղական դոնորներից ստացված գումարները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով: Դրամաշնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում համակարգված հիմունքներով այն ժամանակահատվածների ընթացքում, երբ Խումբը որպես ծախսեր է ճանաչում համապատասխան ծախսերը, որոնց համար դրամաշնորհները նախատեսում են փոխհատուցել:

Արտարժութային գործարքներ

Խմբի գործառնական արժույթը և Խմբի ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ հայկական դրամը («ՀՀ դրամ»):

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում դրամական ակտիվներն ու պարտավորությունները փոխարկվում են կազմակերպության գործառնական արժույթի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Կատարված գործարքներից և տարվա վերջում ՀՀ ԿԲ-ի պաշտոնական փոխարժեքով դրամական ակտիվները և պարտավորությունները կազմակերպության գործառնական արժույթին փոխարկելու արդյունքում ծագած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ գործառնական ծախսեր: Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը իրական արժեքով արտարժույթով չափվող ոչ դրամական հոդվածների վրա ձևակերպվում են որպես իրական արժեքի գծով շահույթի կամ վնասի մի մաս:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթի մնացորդի փոխարկման համար օգտագործված հիմնական փոխարժեքը կազմել է 1 ԱՄՆ դոլար = 396.56 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 ՀՀ դրամ):

Ֆինանսական պարտավորություններ

Խումբը իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:

Բանկերից և այլ փոխատուներից ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները:
Հետագայում նման տոկոսակիր պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, համաձայն որի՝ պարտավորության մարման ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում տոկոսային ծախսերի հաշվարկը կատարվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն դրույքի կիրառմամբ: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության պայմաններից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են գործարքի հետ կապված սկզբնական ծախսերը, մարման ժամանակ վճարվելիք այլ հավելյալ վճարներ, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով:
Հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:
Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ ժամետները.

Հիմնական միջոցի անվանումը	**Ժամկետը**
Շենքեր	20 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Սարքավորումներ	1-8 տարի
Գրասենյակային գույք	5 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

Ֆինանսական գործիքներ՝ չափման հիմնական պայմաններ. Կախված դրանց դասակարգումից՝ ֆինանսական գործիքները չափվում են իրական արժեքով կամ ամորտիզացված արժեքով, ինչպես նկարագրված է ստորև:

Իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելու դիմաց կամ կվճարվեր չափման ամսաթվին շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքում պարտավորությունը փոխանցելու համար: Իրական արժեքի լավագույն ապացույցը գինն է ակտիվ շուկայում: Ակտիվ շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և ծավալով՝ գնագոյացման վերաբերյալ տեղեկատվությունը շարունակական հիմունքներով տրամադրելու համար:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական միջոցների հոսքի մոդելները կամ մոդելները, որոնք հիմնված են պարզած ձեռքի հեռավորության սկզբունքին համապատասխանող վերջին գործարքների կամ ներդրման օբյեկտների ֆինանսական տվյալների հաշվառման վրա, օգտագործվում են որոշակի ֆինանսական գործիքների իրական արժեքի չափման համար, որոնց համար մատչելի չեն արտաքին շուկայի գնագոյացման վերաբերյալ տեղեկությունները: Իրական արժեքի չափումները վերլուծվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի հետևյալ կերպ.

(i) նույնական ակտիվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներով (չճշգրտված) 1-ին մակարդակի չափումներ,

(ii) 2-րդ մակարդակի չափումները գնահատման մեթոդներ են բոլոր էական դիտարկելի ուղղակի (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակի (այսինքն՝ գներից բխող) ելակետային տվյալներով ակտիվի կամ պարտավորության համար,

(iii) 3-րդ մակարդակի չափումները գնահատումներ են, որոնք հիմնված չեն բացառապես դիտարկելի շուկայի տվյալների վրա (այսինքն, չափումը պահանջում է զգալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ): Ենթադրվում է, որ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղափոխությունները տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքն ի սկզբանե ճանաչվել է՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները, իսկ ֆինանսական ակտիվների համար՝ հանած արժեզրկման վնասների գծով ցանկացած դուրսգրումները:

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում: Ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը: Նախնական ճանաչման ժամանակ իրական արժեքի մասին ամենից լավ վկայում է գործարքի գինը: Նախնական ճանաչման գծով շահույթը կամ վնասը գրանցվում է միայն այն դեպքում, եթե առկա է տարբերություն իրական արժեքի և գործարքի գնի միջև, որը կարող է ապացուցվել նույն գործիքի գծով դիտարկելի ընթացիկ շուկայական այլ գործարքների միջոցով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտարկելի շուկաների տվյալները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամարկղում դրամական միջոցները և ընթացիկ հաշիվները բանկերում: Դրամական միջոցները և դրանց համարժեքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Աշխատակիցների գծով հատուցումներ. Աշխատավարձը, կենսաթոշակային ֆոնդի հատկացումները, վճարովի տարեկան արձակուրդն ու հիվանդության արձակուրդը, բոնուսները և ոչ դրամական արտոնությունները (ինչպիսիք են առողջապահական և մանկապարտեզի ծառայությունները) հաշվեգրվում են այն տարում, որի ընթացքում համապատասխան ծառայությունները մատուցվում են Խմբի աշխատակիցների կողմից: Խումբը չունի օրենքով սահմանված վճարումներից բացի կենսաթոշակային կամ նմանատիպ որևէ այլ վճարումներ կատարելու իրավական կամ կառուցողական որևիցե պարտավորություն:

19. ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազար դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
		Ընթացիկ		
Կրեդիտորական պարտքեր	2,134	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտենում է դրանց իրական արժեքներին:	Մակարդակ 3	ոչ կիրառելի
		Ընթացիկ		
Վարկեր	56,863	Վարկերի իրական արժեքը գնահատվում է զեղչելով ապագա դրամական միջոցների պայմանագրային հոսքերը ընթացիկ շուկայական տոկոսադրույքներով:	Մակարդակ 2	6% զեղչի դրույք

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 13:08